ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀՐԱՄԱՆ

N 34-Ա **«28» փետրվարի 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրության 18-րդ կետի 7-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հունվարի 24-ի № 12-Ա հրամանի 5-րդ կետի 1-ին ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության կողմից մշակված «Պետական մարմինների կողմից անձնական տվյալների մշակման ուղեցույցի» հիման վրա մշակված ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) անձնական տվյալների մշակման ընթացակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Տեսչական մարմնի անձնական տվյալների պաշտպանության համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակել տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Ռաիսա Գալստյանին:

3. Ռ.Գալստյանին՝ անձնական տվյալների պաշտպանությունն իրականացնել համաձայն տեսչական մարմնի անձնական տվյալների մշակման ընթացակարգի 5-րդ կետի պահանջների:

28.02.2020

X

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱԳԱՖՅԱՆ

Signed by: SHAGAFYAN ALEKSANDR 3802800141 **Ա. ՇԱԳԱՖՅԱՆ**